

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒՅԱԿՆԵՐ (1801 թ.)

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական գիվանում պահվող փաստաթղթերի մեջ մեր ուշադրութունը գրավեցին 1801 թ. կազմված երեք ցուցակներ: Դրանցից մեկը էջմիածնի վանքի միաբանների և ծառայողների ցուցակն է, մյուսները՝ ոչ անվանական ցուցակներ են էջմիածնի վանքի ու Վաղարշապատ գյուղի եկեղեցիների, ճոզևորականների ու սպասարկող անձանց:

Առաջին ցուցակում հիշատակված են էջմիածնի վանքի եպիսկոպոսները, վարդապետները, սարկավազները, դպիրները, վանական դպրոցի աշակերտները, ներքին սպասավորները, պահապան հրացանակիրները և մյուս բոլոր աշխատողներն ու ծառաները: Հոգևորականներն ու ծառայողների մի մասը թվարկված են անվանապես, մյուսներն՝ ըստ մասնագիտության ու արհեստի:

Այդ ցուցակը ճշգրիտ տեղեկություն է տալիս էջմիածնի վանական տնտեսության, նրա միաբանների ու սպասարկող անձնակազմի վերաբերյալ բաղաբական այնպիսի լարված ժամանակաշրջանում, ինչպիսին XIX դարի ամենասկիզբն էր: Այդ ժամանակ նոր էր ավարտվել պարսից թագաժառանգ Աբբաս Միրզայի արշավանքը Երևանյան երկրի վրա, որը մեծ վնասներ էր հասցրել նաև էջմիածնի վանքին: Մեծացնելով իրենց ազդեցությունը Երևանի վրա, պարսիկները ձգտում էին դարձնել այն ամուր հենակետ ուսաների առաջխաղացումը դեպի հարավ կասեցնելու համար: Այդ պատճառով ուժեղացել էր հսկողությունը նաև էջմիածնի միաբանների նկատմամբ, որոնք անհամբեր սպասում էին հյուսիսի քրիստոնյա տերության զորքերին: Այդ ամենի հետևանքով ծանր վիճակ էր ստեղծվել էջմիածնում, որն ավելի բարդացավ նորընտիր կաթողիկոսի հանկարծահաս մահով:

1801 թ. մարտի 9-ին Ռուսաստանից էջմիածին գալու ճանապարհին՝ Քիֆլիսում վախճանվել էր Հովսեփ Արղությանը և էջմիածնի միաբանությունը կանգնած էր նոր վեհափառի ընտրության դժվարին կացության առջև: Ահա այս ժամանակ կամ գուցե փոքր ինչ ավելի ուշ, անհրաժեշտություն է զգացվել կազմելու վանքի միաբանների ու մյուս անձանց ցուցակը:

Ինչպես երևում է այդ փաստաթղթից, 1801 թ. Վանքում եղել են 22 եպիսկոպոս, 30 վարդապետ, 6 բահանա, 25 սարկավազ, 15 դպիր և ուրիշներ, ընդամենը 197 հոգի: Միաբանների թիվն, անշուշտ, ավելի մեծ է եղել, բայց նրանցից ոմանք իրենց ուղեկցողների հետ միասին բացակակալում էին վանքից՝ նվիրակի պաշտոնով մեկնած լինելով շրջակա վայրերը կամ էլ հեռու երկրներ: Դրանից բացառաբար միաբանների թիվն ավելի մեծ էր: 1781 թ. հունվարին Ղարսի մեծահարուստներից մեկին՝ պարոն Գեորգին ուղղված նամակում Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը (1780—1799 թթ.), հանձնարարելով նրան վանքի համար գնել ցորեն, գրել է հետևյալը. «Բացի մշտական երթևեկողաց բազմաց... մշտական հացակերքն սրբոյ Աթոռոյս լի-

նին իբրև հինգ հարիւր՝», (ընդգծումն իմն է, Վ. Գ.)¹: Ինչպես երևում է, միաբանների կազմը ղգալիորեն պակասել էր: Պատճառները գլխավորապես պետք է որոնել քաղաքական աննպաստ պայմանների մեջ:

Այդ երկու տասնյակ տարիների ընթացքում Արարատյան երկիրը ենթարկվել էր օտար ուժերի հարձակումների, նրա տարածքում տեղի էին ունեցել զինված ընդհարումներ, որոնք, բնականաբար, բացասական ազդեցություն էին ունեցել թե՛ միաբանության, և թե՛ վանքի տնտեսության համար: Վանականներից շատերը հարկադրված են եղել երբեմն ժամանակավորապես, իսկ նրանցից ոմանք էլ՝ ընդմիշտ, հեռանալ էջմիածնից. թաքցվել կամ այլ վայրերն են ուղարկվել վանքի ունեցվածքն ու անասունները: Այսպես է պատահել 1785—1786 թթ. լեզգիների արշավանքի, 1786—1787 թթ. Երևանի խանության մեջ տեղի ունեցած ներքին կռիվների, Մակուի սուլթանի որդի Հասան խանի հարձակման (1795 թ.) և Աղա Մուհամմեդ շահի արշավանքի (1795 թ.) ժամանակ: Հատկապես մեծ կորուստներ ունեցավ միաբանությունը 1797 թ. Արարատյան երկրում մոլեզունդ ժանտախտի օրերին: Այդ հիվանդությանը զոհ գնացին Ներսես, Ղունկիանոս և Գրիգոր եպիսկոպոսները, Գրիգոր վարդապետը և ուրիշներ²: Ահա այս ամենի պատճառով միաբանների թիվը նվազել էր և մյուսների հետ միասին XIX դարի ամենասկզբում կազմում էր մոտ երկու հարյուր մարդ:

Յուցակի կազմման ամսաթիվը նշված չէ: Հոգևոր դպրոցի սաներից մեկի մասին գրված է. «Յ...ի յապրիլի Ա (1) վախճ.»: Ուրեմն այն կազմվել է ապրիլի մեկից հետո: Յուցակը ստեղծվել է միաբանության անդամներին և մյուս անձանց նվեր տալու կապակցությամբ: Այդ մասին ցուցակի այն մասում, որտեղ գրանցված են եպիսկոպոսների անունները, գրված է հետևյալը. «Վանայ նուիրակ Արրահամ վարդապետի բաժանեալ ընծայի դաւթարն է»: Այն ժամանակ սովորություն էր նման ձևով նվերներ տալը, ուստի և կազմվել է համապատասխան ցուցակ: Նվերները, ինչպես կտեսնենք հաջորդ փաստաթղթից, լինում էին նաև փողի ձևով և նրա քանակը կախված էր ստացողների զիրքից ու պաշտոնից:

Հայտնի է, որ էջմիածնի տնտեսության ղեկավարումն իրականացնում էին հենց իրենք՝ միաբանները և այդ հանգամանքն արտացոլում է գտել ցուցակի մեջ: Եպիսկոպոսներից մեկի անվան մոտ առկա «շիրաշի» (զինեզործ) բառը վկայություն է այն բանի, որ նա զբաղվել է այդ զործի ղեկավարությամբ: Նույնը կարելի է ասել վարդապետներ Ալեքսանդրի և Հարություն Անչեցու վերաբերյալ, որոնցից առաջինը հիշվում է որպես շորապան, մյուսը՝ տնտես: Փիլիպոսը «քեավրան պաշի» էր՝ քարավանապետ:

Յուցակում նշված են վանքի տնտեսությամբ զբաղվողները՝ հացապան, մածնապան, ձիթապան, մառանապետ, պարտիզպան, ախոռապետ, խոհարար, փոնապան, սեղանապետ, կովկիթ, փայտահատ, աչքեսպանների պետ, դարբին, դարմանապահ, մազ մանող, ազոն անող, ալյուր կրող, մոմ սարքող, բրինձ ընտրող, հացթուփ, թիկնապահ, դոնապան, ծառա:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 59ա:

² Մանուկ Գյումուշյանցի, Ցաղագս մահտարածամի, որ է լեռկիրն Քիֆիզոյ և էջմիածնի և ի դիւզս Վաղարշապատ (Մատենադարան, Արխիվային բաժին, Ա. Երեցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 142):

Վանքը սահմանափակ թվով հրացանակիրներ ուներ, որոնց վրա դրված էր վանքի պաշտպանության և այլ վայրեր մեկնող հոգևորականներին ուղեկցելու պարտականությունը: Անվանապես հիշատակված են 23 հրացանակիրներ՝ իրենց տասնապետ Պետրոսի հետ միասին: Հետաքրքրական է, որ այդ հրացանակիրներից մեկը՝ Կարապետը եղել է «ղուշլի»՝ բաղեպան: Ուրեմն այն ժամանակ էջմիածնում էլ ընդունված է եղել բաղեններով որս անելը և եղել է նաև այդ գործը գլխավորող կամ բաղենները վարժեցնող անձ:

Մի քանի հոգի զբաղված են եղել գրագրության գործով՝ դրել կամ արտագրել են կաթողիկոսի նամակներն ու կոնդակները, հատուկ մատչանների մեջ արձանագրել նրանց հակիրճ բովանդակությունը և կատարել այդ բնույթի աշխատանքներ: Ցուցակում հիշվում են նրանցից երկուսը՝ Ստեփան և Մկրտիչ գրագիրները: Սովորաբար գրագիրների աշխատանքին հետևում էր եպիսկոպոսներից կամ վարդապետներից մեկը, բայց այստեղ այդ բանը չի նշված:

Ուշագրավ է ցուցակի այն մասը, որտեղ թվարկված են էջմիածնի վանական դպրոցի սովորողները: Հայտնի է, որ այդ դպրոցի համար դեռևս Միմեոն երևանցու օրոք (1763—1780 թթ.) էջմիածնի վանքի հյուսիսային կողմում կառուցվել էր հատուկ շինություն, որը նորոգել էր Ղուկաս Կարնեցին³: Միմեոնի բնարության ժամանակ դպրոցում սովորում էին ընդամենը տասներեք աշակերտներ⁴, որոնց թիվը հետագայում մի քիչ ավելացավ: Ղուկասի բնարվելուց մի քանի ամիս անց դպրոցում կային 24 երեխաներ (1780 թ. հոկտեմբեր)⁵: 1781 թ. սովորողների թիվը հասնում է 32-ի⁶: Մեկ տարի անց սաների թիվը մի քիչ պակասում է (26 հոգի)⁷: 1783 թ. դպրոցում կային 28 աշակերտներ⁸, իսկ 1785 թ.՝ 29 հոգի⁹:

Հրասպարակված ցուցակից երևում է, որ 1801 թ. էջմիածնի հոգևոր դպրոցի աշակերտներն ընդամենը 17 հոգի էին, որոնցից մեկը, ինչպես վերը նշեցինք, վախճանվել էր՝ ասյրիլ ամսվա սկզբին: Սովորողների թվի այսօրինակ նվազումը ևս պետք է բացատրել քաղաքական աննպաստ պայմաններով: Հետագայում սովորողների թիվն ավելի է նվազում: Նույն արխիվում պահվող մի փաստաթղթից, որը կազմվել է 1802 թ. դեկտեմբերի 19-ին, երևում է, որ այդ ժամանակ էջմիածնի դպրոցում սովորել են 11 աշակերտներ: Համենայնդեպս, այդ թվով աշակերտներ են հիշվում այն ցուցակում, որը կազմված է նրանց զգեստներ տալու կապակցությամբ (յուրաքանչյուրին տրվել է մեկական արխալուզ, երկուական շապիկ և ոտաց շոր)¹⁰:

Այժմ մի քանի խոսք ցուցակում հիշատակվող հոգևորականների մասին: Վարդապետների թվում նշված է նաև նշանավոր քաղաքական ու եկեղեցական գործիչ Ներսես Աշտարակեցու անունը, որը հետագայում այնքան մեծ դեր խաղաց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում:

Ցուցակում առաջինը հիշված Միմեոն եպիսկոպոսը հայտնի դեմք էր.

3 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 135:

4 Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 2:

5 Նույն տեղում, էջ 30:

6 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 1, էջ 276:

7 Նույն տեղում, թղթ. 4, վավ. 11, էջ 104:

8 Նույն տեղում, էջ 108:

9 Նույն տեղում, էջ 117:

10 Նույն տեղում, թղթ. 2, վավ. 11, № 27ա:

Ղուկաս Կարնեցու մահից հետո նա ստանձնել էր «աթոռակալի» պարտականությունը: Նա էր, որ մեկնել էր Քիֆլիս՝ Պետերբուրգից ժամանող Հ. Արղուժյանին դիմավորելու համար: Նրա հետ էին նաև ցուցակում հիշատակվող գրադիր Անդրեաս և Բարսեղ Աշտարակեցի եպիսկոպոսները, ինչպես և Քաղեսուր, որն անվանված է ատենադպիր¹¹: Այն հանգամանքը, որ Սիմեոն եպիսկոպոսը ցուցակում նշվում է որպես «աթոռակալ», հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ այն կաղմվել է մինչև Գավթի կաթողիկոս դառնալը, այսինքն՝ մինչև 1801 թ. ապրիլի 28-ը:

Ցուցակում հիշատակվող Ղուկաս եպիսկոպոսը եղել է Ղուկաս Կարնեցու խոստովանահայրը: Հ. Արղուժյանի մահից հետո Երևանի խանի օժանդակությամբ կաթողիկոս հռչակված Գավթիթը, Հովհաննես եպիսկոպոսի Քիֆլիս փախչելուց հետո, բանտարկել է տալիս մի շարք անձանց, որոնց մեջ էր նաև «ծերունի առաքինակրօն Ղազար եպիսկոպոսն՝ խոստովանահայր Ղուկաս կաթողիկոսի», որին միաբանները մի կերպ ազատում են: Ուրեմն նա դեմ էր խանի հովանավորչալին Գավթի-Դանիելյան վեճի ժամանակ: Հայտնի է, որ այդ օրերին միաբանների մի մեծ խումբ գրավոր դիմում է ներկայացնում Երևանի խանին՝ պահանջելով կաթողիկոս դարձնել ոչ թե Գավթին, այլ Դանիելին: Ստորագրողների թվում էին նաև այս ցուցակում առկա Ալեքսան, Հովակիմ, Ստեփաննոս, Գրիգոր, Սողոմոն, Աստվածատուր, Ղազար և Հովհաննես եպիսկոպոսները, ինչպես և երկու տասնյակից ավելի վարդապետներ¹²: Կաթողիկոսական գահի համար Գավթի ու Դանիելի և սրանց կողմնակիցների միջև ծավալված համառ ու երկարատև պայքարը վեր էր ածվել քաղաքական հակամարտության: Ռուսական իշխանությունների հովանավորությունը վայելող Դանիելի կողմնակիցները հակադրվելով խանի դրածո Գավթին, փաստորեն բացահայտում էին իրենց ռուսական կողմնորոշումն այն պայմաններում, երբ այլևս գաղտնիք չէր ռուսական իշխանությունների մտադրությունը Երևանյան երկրի վերաբերյալ: 1801 թ. սեպտեմբերի 26-ին ռուսական Ալեքսանդր I ցարը, սխալ համարելով Գավթի ընտրությունը, հատուկ հրովարտակով կաթողիկոս է հռչակում Դանիելին: 1802 թ. մայիսին նա հաստատության հրովարտակ է շնորհում Դանիելին: Այդ կապակցությամբ համապատասխան հրաման տրվեց Կովկասի կառավարչապետ Կնորինգին, իսկ Երևանի խանին նամակով հանձնարարվեց օգնել Դանիելին՝ զբաղեցնելու կաթողիկոսական գահը¹³:

Երևանի խանը ոչ միայն շկատարեց թագավորի ցանկությունը, այլև բռնություններ կիրառեց Դանիելի կողմնակիցների նկատմամբ: Նա բանտարկել է տալիս Աստվածատուր, Բարսեղ և Ավետիս եպիսկոպոսներին, իսկ մյուսներին, որոնք Երևան էին եկել Դանիելի հարցով, ձիավոր զինվորների առջև գցած ձեծելով տանել է տալիս մինչև էջմիածին¹⁴: Այնտեղ Գավթիթը շարունակում է բռնությունները՝ բանտարկում է Աբրահամ վարդապետ Աստրախանցուն, Փիլիպպոս Եվդոկացի, Ռեթեոս վարդապետներին և էլի մի քանի անձանց:

11 Աղեֆաևդը Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր 19-րդ դարում, մասն Ա, Քիֆլիս, 1894, էջ 14:

12 «Գիւան հայոց պատմութեան», հ. Ա-Բ, Քիֆլիս, 1893, էջ 140—141:

13 Աղեֆաևդը Երիցյանց, Եջվ. աշխ., էջ 20, 24:

14 Նույն տեղում, էջ 143:

Ինչպես տեսնում ենք, ցուցակում հիշատակվող հոգևորականների մեծամասնությունը Դանիելի կողմնակիցներից էր:

Ցուցակում եղած Մարտիրոս եպիսկոպոսը ներսես Աշտարակեցու հետ միասին մասնակցել է Ուշքիլիսեի 1802 թ. մայիսի 25-ի հայտնի ժողովին, որի ժամանակ կաթողիկոս է հռչակվել Դանիելը: Հայտնի դեմք էր նաև ախալցխացի Անտոն վարդապետը, որը ժամանակին կաթողիկոսություն էր ընդունել և Հյուսիսային Կովկասի հայերի մեջ զբաղվում էր կաթողիկ քարոզով: Հետո նա դարձի եկավ և Մոզզոկ քաղաքում Հ. Արղուճյանին տվեց ուխտի ու երգման գիր: Վերջինիս մահից հետո այդ վարդապետը գալիս է էջմիածին և, ինչպես երևում է ցուցակից, դառնում միաբանության անդամ: Նա զբաղվում էր նաև բժշկությամբ, ուստի Երևանի խանի ցանկությամբ մեկնում է Երևան: Հետո հայտնի է դառնում, որ նա նորից զբաղվում է կաթողիկոսություն տարածելով: Երևանից նա փախչում է Բայազետ, այնտեղից Կարին ու հետո՝ Թիֆլիս: Այդ կապակցությամբ Դավիթ կաթողիկոսը նամակներ է գրել Թիֆլիսահայությունը, գեներալ Լազարովին և ուրիշներին¹⁵:

Հաջորդ փաստաթուղթը կազմվել է 1801 թ. ապրիլի 28-ին՝ Դավիթ կաթողիկոսի օժման օրը: Դա նույնպես ցուցակ է, բայց, ինչպես նշել ենք վերը, ոչ անվանական, և կազմված է օժման կապակցությամբ տրվելիք նվեր դրամը՝ «պաշտամանցը» բաժանելու գործը դյուրացնելու համար: Առանձին-առանձին նշված են հոգևորականները և մյուս բոլոր անձինք: Վավերագրի մյուս երեսին կա մեկ այլ ցուցակ, որն արված է «պաշտամանցի» բաշխումը ճիշտ կատարելու նպատակով՝ «Պաշտամանց բաժանելոյ կերպն աստ նշանակեցաք՝ ի դիրութիւն բաժանողին» (վավերագիր, № 3):

Երևանի խանության սահմաններում այն ժամանակ շրջանառության մեջ էին գտնվում թե՛ պարսկական (թուման, արասի, շահի) և թե՛ թուրքական (դուռուշ, փարա) դրամները: Ըստ ցուցակի, պաշտամանցը բաշխվել է այդ դրամներով: Մեծ մասամբ սկզբում գրել են թուրքական դրամը, հետո նրա պարսկական արժեքը և ներքևում կատարել գումարում՝ թուրքականի հաշվով: Օրինակ, «3.00, վանքին լուսագին ԲՌ (2000)»: Սա նշանակում է: որ տրվել է 3 դուռուշ, որը հավասար էր 2000 դիանի: Կամ «2.20, Ա (1) սևագլխի Ճ (100) փարայ»: 100 փարան հավասար էր 2 դուռուշ 20 փարայի: այդպես էլ գրված է՝ 2 դուռուշ 20 փարա: Մեկ արասին հավասար էր 12 փարայի, իսկ մեկ դուռուշը՝ 40 փարայի: Օրինակ, տրվել է 6 շահի: Մեկ շահին անում էր 3 փարա, ուստի և սկզբում գրել են 12 փարա: Կամ արասին հավասար էր 12 փարայի: Գրված է՝ «Բ (2) տնտես և դոնապան Ա Ա (1,1) ապասի», իսկ դրանից առաջ գրված է՝ 24 (փարա):

Գումարումը կատարվել է դուռուշի հաշվով: Օրինակ, ս. Հոսիսիմեի վանքին և միաբաններին տրվել է ընդամենը 7 դուռուշ 12 փարա: Գումարումը հետևյալ ձևով է կատարվել՝ 3 դուռուշ + 2 դուռուշ 20 փարա + 1 դուռուշ 8 փարա + 24 փարա հավասար է 7 դուռուշ 12 փարայի (կամ 292 փարայի):

Վերահիշյալ ցուցակները լրացնելով միմյանց, հնարավորություն են ընձեռում ավելի պարզ պատկերացում կազմելու էջմիածնի վանքի, ինչպես և Վաղարշապատ գյուղի եկեղեցիների հոգևորականների և սպասարկող կազմի և, վերջին հաշվով, վանական տնտեսության վերաբերյալ:

¹⁵ «Գիւան հայոց պատմութեան», գիրք 2, Թիֆլիս, 1904, էջ 353—354:

Վազերագրերի մեջ, ինչպես ընդունված էր այն ժամանակ, մի շարք մասնադիտությունների ու արհեստների անունները թուրքերեն, պարսկերեն կամ արաբերեն են: Դրանց թարգմանությունը սալխա ենք օտար բառերի փոքրիկ բառարանում:

ՎԱՎԵՐԱԳԻՐ N 1

Ի ՌՄԾ (1801) ԹՈՒԻՆ ՆԵՐՎԱՅ ԳՏԱՆԵՅԵԱԼ ՄԻՎԲԱՆՔՆ ԵՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ:

(Վանայ նուիրակ Աբրահամ վարդապետի բաժանեալ ընծայի դարբան է).

Եպիսկոպոսն են

Սիմէօն աթոռակալ
Ալեքսան ժամօրհնօղ
Յովակիմ վարժապետ
Ստեփան ծերունի
Գրիգոր շիրաշի
Աստուածատուր
Անդրէաս
Բարսեղ
Սողոմօն
Թադէոս
Ղազար
Յօհաննէս
Ստեփան
Յօհաննէս
Մարտիրոս
Յակոբ Գեանշ[եցի]
Վարդան
Աւետիք
Աբրահամ
Յօհաննէս
Գէորգ
Յօհաննէս

Զաքարիա էջմ[իածնեցի]
Գրիգոր վէքիլ
Աղէքսանդր շորապան
Ղուկաս լուսարար
Անտօն վարդապետ
Յարութիւն Առնշեցի տնտես
Սահակ էջ[միածնեցի]
Փիլիպպոս Թօխ[աթեցի]
Փիլիպպոս քեավրան պաշի
Մկրտիչ
Մովսէս
Փիլիպպոս
Ներսէս Աշտարակեցի
Յակոբ Ղարիպ վարժապետն
Եսայի
Կարապետ
Հռէթէոս
Տէր Յակոբ
Տէր Պօղոս
Տէր Ահարոն
Տէր Մարկոս
Տէր Մատթէոս
Տէր Մկրտիչ
Թադէոս Առաքելոյ միարան

Վարդապետն են

Գրիգոր
Աբրահամ
Յօհաննէս պառափ
Յօհաննէս Գառն[եցի]
Աբրահամ Հաշտարիսանցի
Գէորգ Երևանցի
Յօհաննէս Կարբեցի
Մինաս էջմիածնեցի
Ստեփան Չուղայեցի

Ներսային սպասաւորն

Կարապետ վարդապետ
Ղազար վար[դապետ]
Աբրահամ վար[դապետ]
Յօհաննէս վար[դապետ]
Աղամ սարկ[աւազ]
Մկրտիչ սարկ[աւազ]
Մկրտիչ փոքրիկ
Սրապիոն սար[կաւազ]
Ստեփան սար[կաւազ]

Խաչատուր
Յարութիւն
Յարութիւն փոքրիկն

Սարկաազունք

Ստեփան գրագիր
Ստեփան
Գալուստ վար.
Եփրեմ
Մարտիրոս
Յօհաննէս
Մկրտիչ գրագիր
Սահակ
Պօղոս
Յակոբ
Բարսեղ
Գրիգոր
Սրապիոն
Մկրտիչ
Մեսրօպ
Գէորգ
Խաչատուր Պօլ[սեցի]
Պօղոս Հաճի
Գրիգոր
Դանիէլ
Տրդատ

Եցի դպիրքն

Խաչատուր
Յօնան
Սարգիս
Յօհաննէս
Սարգիս
Յարութիւն
Եղիայ
Աւետիք
Յարութիւն
Գէորգ
Գարրիէլ
Յօհաննէս
Կարապետ
Գալուստ
Մկրտիչ

Վարժաւան տղայքն

Աւետիք
Սահակ
Կարապետ
Յարութիւն
Պաղտասար
Գարրիէլ
Խաչատուր
Յօհան
Գարրիէլ
Հայրապետ
Յովսէփ
Յ... ի չապրիլի Ա(1) վախճ.
Քաղէոս
Արիստակէս Շահրիարցի
Պետրոս
Աբրահամ
Վարդան պապի թոռն Մկրտիչ

Մահտեսիք և այլք

Գրագիր Յարութիւնն
Հացապանն
Մահտեսի Դաւիթ պաղար պաշին
Մածնապան Յովսէփն
Զիթապան Պետրոսն
Մառնապետն
Դահպաշին
Մինախոռն
Ներսի դոնապանն
Գ(3) սեղանապետքն
Բ(2) խառատքն
Դերձակ մահտեսին
Նաւասարդն
Բաղշաշին ներսի
Նալբանդն
Դ(4) աշխիքն
Ե(5) փոնջիքն
Դ(4) դոնապանքն
Մոմատան մահտեսին
Աթոռակալի շաթիրն
Աղօն անօղն
Ալիւր կրօղն

Պալթաշին
Կատեպան պաշին
Գարմանապանն
Կով կթօղն
Բ(2) մազմանքն
Բ(2) տղայքն Ղազարապատի
Բ(2) բրինձ բնարողքն
Բ(2) բաղջաշիքն

Թ ու Ֆ է և գ շ ի և ն է

Գահպաշի Պետրոսն
Գրիգորն քօսայ
Գէորգն
Թուշանն
Սանփանն
Եփրեմն
Յօհաննէսն վէլի
Յակօրն
Աւետիքն
Մկրտումն
Յօհաննէսն մահտեսու
Յօհաննէսն մոծակ

Կարապետն դուշշի
Մէլքոնն
Յարութիւնն
Սիմէօնն
Խաչատուրն
Մնացականն
Յարութիւնն դազախ
Յարութիւնն միւս
Ապէրն
Մէլքիսէթն
Սիմէօն իրիցի
Գ (3) շաթիրքն
Բ (2) Իսրայէլ և Մկրտիչ փա-
ռաշք
Բ (2) աղջոց
Ա (1) հացթուխ

(Մաշտոցի անվան Մատենադա-
րան, Արխիվային բաժին, կա-
թողիկոսական դիվան, թղթ. 2,
վավ. 11, № 27 և):

ՎԱՎԵՐԱԳԻՐ N 2

Ի ՌՄԾ (1801) ԹՈՒԻՆ Ի ՅԱՊՐԻԼԻ ԻԸ (28)-ԻՆ ՆՈՐՈԳ ՍՐԲԱԶԱՆ ՎԵՂԻ
ՕԾՄԱՆ ՕՐՆ ԱՅՍՈՒ ԿԵՐՊԻ ԲԱԺԱՆԵՑԱՔ ՊԱՇՏԱՄԱՆՅՆ ԹԷ ՄԻԱԲԱՆԻՅ
ԵՒ ԹԷ ՎԱՆՈՐԷԻՅ ՄԻԱԲԱՆԱՅ ԵՒ ԳԻՒՂԻՄ ՔԱՀԱՆԱՅԻՅ:

Եպիսկոպոսաց՝ Դ Դ (4—4) դուռուշ:
Վարդապետաց՝ ԱՃ (100) փարայ:
Նարկաւազաց՝ Մ (50) փարայ:
Դպրաց և մահտեսեաց՝ Բ Բ (2—2) ապասի:
Ամալայից՝ Ա Ա (1—1) ապասի:
Շախրաց, աղջոց, դերձակ Նաւասարդին, մառանապետին, դոնապանին՝
Ճ Ճ (10—10) շահի:
Մաժնապան Յովսէփին՝ Մ (50) փարայ, որ կարգաւորի տամք:

ՍՈՒՐԵ ՀՈՒՓՈՒՄԻ ՎԱՆՔԻՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԻՅ

03:00 Վանքին լուսագին՝ ԲԹ (2000):
02:20 Ա(1) սեազլիսի՝ Ճ (100) փարայ:
01:08 Բ(2) դպրաց՝ Դ (4) ապասի:
00:24 Ա(1) տնտես և Ա (1) մահտեսի՝ Բ(2) ապասի:

- 30 փարայ Ա(1) կարգաւորի:
 24 փարայ Բ (2) դպրի:
 12 փարայ Ա(1) մահտեսու:
 06 փարայ Ա(1) տնտեսի:

- 72 փարայ, որ է Ա(1) դուռուշ
 1Բ (32) փարայ:

Այս հասարակ պաշտամանց է ի ժամ առնելն սրբազան վեհին, ի մայիսի 5:

ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԻ ՎԱՆՔԻՆ ԵՎ ՄԻԱԲԱՆԱՅ

- 3:00 վանքին լուսագին՝ ԲՌ (2000):
 7:20 Բ(2) սևագլխաց և սարկաւազ Խաչատուրին ձ(100) փարայով:
 1:08 Բ(2) դպրաց՝ Բ Բ (2—2) ապասի:
 0:24 Ա(1) մահտեսի՝ Բ(2) ապասի:
 0:12 Ա(1) տնտեսին՝ Ա(1) ապասի:

12:24

3,12 յետին պաշտամանցն էր ի մայիսի 5:

ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔԻՆ ԵՎ ՄԻԱԲԱՆԻՑ

- 3:00 վանքին լուսագին՝ ԲՌ(2000):
 5:00 Բ (2) կարգաւորաց ձ (100)-ական փարայ:
 2:16 Դ (4) դպրաց՝ Բ Բ (2—2) ապասի:
 0:124 Բ(2) տնտես և դննապանաց՝ Ա Ա (1—1) ապասի:

11:00

- 1:20 Բ(2) կարգաւորաց:
 1:08 Դ(4) դպրաց:
 0:12 Ա(1) մահտեսի:
 0:06 Ա(1) տնտես:

3:06

Հասարակն է ի մայիսի 5:

ԳԻՆՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ

- 01:20 Եկեղեցույն՝ ԱՌ (1000) լուսագին:
 00:24 Աւագ իրիցին:
 03:15 Թ(9) քահանայից՝ Ե Ե (5—5) շահի:
 00:18 ժամուց՝ 2(6) շահի:
 00:12 ժամհարաց երկուց:

06:09

(Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, Քղթա-
 պանակ 2, վավերագիր 11, № 277, էջ 1):

ՎԱՎԵՐԱԳԻՐ № 3

Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍՐԲԱԶԱՆ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՎԱՆՈՐԷԻՏ ՊԱՇՏԱՄԱՆՅՆ ԱՅՍՊԷՍ ՏԱՅԱՔ, ՄԵԶ ԱՅՆՊԷՍ ԱԻԱՆԴԵԱԼ ԷՐ ՄԿՐՏԻԶ ՎԱՐԴԱՊԵՏՆ. ՆՈՑԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՒՍ ԱՅՆՊԷՍ ԵՂԵԱԼ Է: ՍՐԲԱԶԱՆ ՎԵՀԻ ՕԾՄԱՆ ՏՕՆԻՆ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻՆ:

ԲՌ (2000) դիան հկեղցւոյն լուսագին:

Ա (1) զուտուշ հպիսկոպոսին:

Ժ (10) շահի վարդապետաց:

Ա(1) ապասի սարկաւազաց:

Բ(2) շահի դպրաց և մահտեսեաց, բայց յերբ լուսաւորեալ հոգին վախճանեցաւ. Մինաս լուսահոգի վարդապետն հաւասար միարանից բաժանել ետ պաշտամանցն, որպէս գրեալ ունիմք յայլ տեղ, որ տեսանելոց էք:

ԳԻՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒՍ ԱՅՍ ԿԵՐՊ ՏԱՅԱՔ.

ԱՌ(1000) դիան հկեղցւոյն լուսագին:

Բ(2) ապասի աւագ իրիցին:

Ե Ե(5—5) շահի միւս քահանայից:

Զ(6) շահի ժամուց:

Բ Բ(2—2) շահի ժամհարաց:

ՊԱՇՏԱՄԱՆՅ ՔԱԺԱՆԵԼՈՅ ԿԵՐՊՆ ԱՍՏ ՆՇԱՆԱԿԵՑԱՔ Ի ԴԻՐՈՒԹԻՒՆ ՔԱԺԱՆՈՂԻՆ:

Ա (1) զուտուշ հպիսկոպոսաց:

Ժ (10) շահի վարդապետաց:

Ե (5) շահի սարկաւազաց:

Ա (1) ապասի դպրաց և մահտեսեաց:

Բ (2) շահի ամալայից ոմանց և ոչ ամենեցուն:

Ժ (10) շահի մածնապան Յովսէփին և ներսի աշջոցն:

Ե Ե(5—5) շահի շաթրաց, բայց սրբաղան վեհի Բ (2) տօնին՝ Ժ Ժ (10—10) շահի տուր:

Ա (10) ապասի դահպաշուն:

Ա (1) ապասի մինախոտին:

Ա (1) ապասի նալբանդին:

Ե Ե (5—5) շահի ներսի դոնապանին և դերձակ նաւասարդին:

Ա (1) ապասի միւս դերձակաց:

Ա (1) ապասի գրագիր Յարութիւնին:

Ա (1) ապասի բաղջաշուն ներսի:

Ե (5) շահի մառանապետին:

Գ (3) շահի մեծ դարվազի դոնապանին:

Ե (5) շահի աշջու մուգուրիկին, Էթէ լինիցի, կամ Ա (1) ապասի:

Ե (5) շահի հացթուխ սլառաւին:

(Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, Թղթապանակ 2, վաղերագիր 11, № 27բ, էջ 2):

ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ՀԱՆԻՊՈՂ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

Ամալայ — (արար.) սևագործ բանվոր
 Աշշի — (թուրք.) խոհարար
 Ապասի — պարսկական դրամական միավոր (հավասար էր 4 շահու)
 Բաղշաշի — (պարս.-թուրք.) պարտիզպան
 Դահաշի — (պարս.-թուրք.) տասնապետ
 Դարվաղ — (պարս.) դարպաս
 Դիան — պարսկական դրամական միավոր (10000 դիանը հավասար էր մեկ թումանի)
 Բուֆենքշի — (թուրք.) հրացանակիր
 Կասեպան պաշի — (հայ.-թուրք.) այլ-պեպանների պետ
 Ղուշշի — (թուրք.) բազկապան
 Ղուսուշ — թուրքական դրամական միավոր (հավասար էր 40 փարաշի)

Մինախոս — (պարս.) ախոսապետ
 Նալբանդ — (պարս.) դարբին
 Շաթիր — (արար.) ծառա
 Շահի — պարսկական դրամական միավոր (հավասար էր 10 փուլի)
 Շիրաշի — (թուրք.) գինեգործ
 Պազար պաշի — (թուրք.) շուկայապետ
 Պալթաշի — (թուրք.) փայտահատ
 Վեքիլ — (արար.) լիազոր, հավատարմատար
 Փառաշ — (արար.) թիկնապա՛
 Փարայ — թուրքական դրամական միավոր
 Փոնշի — (թուրք.) փոնեպան
 Քեափրան պաշի — (թուրք.) բարավանապետ

V. ГРИГОРЯН

СПИСКИ МОНАСТЫРСКИХ БРАТИЙ ЭЧМИАДЗИНА (1801)

(Резюме)

Впервые публикуемые списки хранятся в архивном отделе Матенадарана (Архив католикосата, папка № 2, документ № 11). В них упоминаются духовные лица, учащиеся церковной школы, члены вооруженной охраны и весь обслуживающий персонал Эчмиадзинского монастыря, а также четырех церквей с. Вагаршапат (св. Рипсиме, св. Шогакат, св. Гаяне и сельская церковь). Списки, составленные накануне присоединения Восточной Армении к России, дают интересные и достоверные сведения о структуре, а также монастырском хозяйстве духовного центра армян. Списки публикуются с предисловием и словарем.

V. GRIGORIAN

LISTES DES CONFRERIES MONACALES D'ETCHMIADZINE (1801)

(Résumé)

Ces listes, publiées pour la première fois, sont conservées aux Archives du Maténadaran (Archives du Catholicossat, dossier n°2, document n°11). Elles mentionnent les ecclésiastiques, les élèves du séminaire, les membres de la garde armée et tout le personnel du monastère d'Etchmiadzine et des quatre églises du village de Vagharchapat (Ste-Hripsimé, Ste-Choghakat, Ste-Gayané et l'église rurale). Ces listes, dressées à la veille du rattachement de l'Arménie Orientale à la Russie, donnent des renseignements intéressants et dignes de foi sur la structure et l'organisation économique du centre spirituel des Arméniens. Les listes sont publiées avec une préface et un vocabulaire des mots étrangers.